



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

դեկտեմբերի 2017 թվականի №Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ընտրանքային մոնիթորինգի արդյունքները, համաձայն որոնց՝ 2017 թվականի ապրիլ և մայիս ամիսներին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից դիմող անձանց ներկայացված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրերը (այսուհետ՝ Միացման պայմանագիր) չեն համապատասխանում տվյալ պահին գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 2-րդ հավելվածով հաստատված Միացման պայմանագրի օրինակելի ձևին,

բ) այն, որ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2017 թվականի հոկտեմբերի 16-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ վերը նշված փաստի ուսումնասիրության նպատակով,

գ) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) որ լրացուցիչ ուսումնասիրությունների իրականացման նպատակով վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 2 անգամ՝ 10-ական օրով,

ե) որ Կանոնների 13.3 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրական ցանցին միացման դիմում ներկայացրած անձին ներկայացվում է միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով մատակարարի կողմից ստորագրված Միացման

պայմանագիրը 2 օրինակից՝ Կանոնների 2-րդ հավելվածով հաստատված օրինակելի ձևին համապատասխան,

զ) որ իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը չի կատարել Կանոնների 13.3 կետի 2-րդ ենթակետի պահանջը՝ խախտելով որոշ սպառողների իրավունքները, և՛

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «գ» ենթակետը և 6-րդ կետը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Կանոնների 13.3-րդ կետի 2-րդ ենթակետը խախտելու համար Ընկերությանը ենթարկել տուգանքի՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
  - 1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
  - 2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**